ՄԵՆՔ ԹՐԾՎԵԼ ԵՆՔ ԴԱՐԵՐՈՎ

Դրա համար ենք այսպես դիմանում.

ասում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Մայրություն» բարեգործական հիմնադրամի նախագահ ՀԱՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ: Նրա հետ օրերս զրույց ունեցավ մեր թերթի թղթակիցը:

Երկու տարի առաջ է ստեղծվել հիմնադրամը: Մայրերի ու երեխաների իրավունքների պաշտպանություն, նյութական ու բարոյական օգնություն՝ ահա նրա նպատակները: Դեռ համեմատաբար խաղաղ օրերին երկրամասում հաշվառված էին նման օգնության կարիքն զգացող 500 ընտանիքներ: Իրադրությունը կտրուկ փոխվեց: Ռմբակոծության հետևանքով միայն ԼՂՀ-ի մայրաքաղաքում մի ամիս առաջ անօթևան էր մնացել ավելի քան 300 ընտանիք: Փլվել են մանկական հիվանդանոցի, միակ պոլիկլինիկայի, ծննդատան, հանրապետական հիվանդանոցի շենքերը: Առողջապահության համակարգը ողբալի վիճակում է: Շարքից դուրս են եկել Ստեփանակերտի բոլոր դպրոցներն ու մանկապարտեզները: Գոյատևման պայքար է գնում: Իսկ այս վերջին շրջանում Շուշիից «Գրադ» և «Ուրագան» տիպի կայանքներից արձակված հարյուրավոր արկերից հիմնահատակ ավերվել է Ստեփանակերտի բնակելիների կեսից ավելին՝ տանելով բազմաթիվ զոհեր, վիրավորելով հարյուրավոր բնակիչների: Մերկ ու բոկոտն մարդիկ մնացել են առանց օրվա հացի, առանց լույսի ու ջերմության: Նրանք պատսպարվել են նկուղներում:

Երկարակեցությամբ աշխարհին հայտնի Արցախում բարձր մահացության երկրորդ պատճառն այսօր սրտանոթային հիվանդություններն են, որ նույնպես հետևանք են գերլարված իրադրության: Վտանգավոր հաճախականությամբ են կրկնվում վարակիչ հիվանդությունները՝ պատերազմների այդ մշտական ուղեկիցները: Շեշտակի նվազել է ծննդաբերությունը: Մինչև ղարաբաղյան շարժումը երկրամասում տարեկան ծնվում էր չորս հազար երեխա: Այսօր այդ կարևորագույն ցուցանիշը նվազել է երկու անգամ: Հարկ չկա խոսել հղի մայրերի հոգեկան ծանր վիճակի մասին: Հիշեցնենք միայն, որ Շուշիից Ստեփանակերտի ծննդատան ավերումից հետո արցախցի հարսները ծննդաբերում են ԼՂՀ-ի Գերագույն խորհրդի շենքի ցուրտ ու խոնավ նկուղներում: Այո, որքան էլ արտառոց, այսպես են մեր օրերում լույս աշխարհ գալիս ղարաբաղցի արծվաձագերը, որ մեր ոսկե գենոֆոնդն են: Եվ փույթ չէ, որ անլույս նկուղներում են ծնվում նրանք: Այդ մանուկների գեների մեջ արցախյան հպարտ լեռների [illegible] կանչը կա, իրենց պապերի ու հայրերի ազատատենչ ոգին: Իսկ ամենակարևորն այն է, որ համատարած ռազմաճակատ-Արցախում հայ մանուկներ են ծնվում այսօր: Հայրերն այս մանուկների վաղվա հայաշունչ օրվա համար են զենքի դիմել...

ԼՂՀ-ի «Մայրություն» հիմնադրամը բազմազավակ ու միայնակ մայրերին, որբ երեխաներին, բազմանդամ ընտանիքներին հնարավորության սահմաններում օգնում է դրամով, մանկական սննդով, հագուստով, դեղորայքով: Յուրաքանչյուր նորածին երեխայի միանվագ նպաստ է տրվում՝ 50 ռուբլի: Շատ քիչ է, իհարկե: Բայց ավելին ի վիճակի չեն, ցավոք: Նախագահին հարցրի, թե ի՞նչ միջոցներից է գոյանում հիմնադրամը: Ֆինանսական օգնություն են ցույց տալիս ՀՀ ֆինանսների, թեթև արդյունաբերության, առողջապահության նախարարությունները, «Լույս», «Մասիս» արտադրական միավորումները, Երևանի քաղխորհրդի արտաքին տնտեսական կապերի բաժինը, թեթև արդյունաբերության բանվորների արհմիության հանրապետական կոմիտեն, կոոպերատիվների միությունը, Արտաշատի, Գյումրիի, Կիրովականի մի շարք հիմնարկ-ձեռնարկություններ, անհատ մարդիկ:

— Օգնության առյուծի բաժինը՝ 100 հազար ռուբլի, ստացել ենք ՀՀ մայրության հիմնադրամից,— ասում է Համիկ Միքայելյանը:— Շնորհակալությամբ ուզում եմ ասել, որ մենք նրա հոգեզավակն ենք:

Ավելացնենք, որ մարտնչող Ղարաբաղի մայրերին ու մանուկներին օգնել կամեցողները կարող են փոխանցումներ կատարել «Արցախ» հայրենակցական-բարեգործական միության միջոցով՝ ՀՀ Երևանի պետատբանկի՝ նրա 700001 հաշվին (կոդ՝ 370101572), փոխանցելով գումարը և նշելով՝ Արցախի մայրության հիմնադրամի համար:

«Մայրությունն» զբաղվում է ոչ միայն բարեգործությամբ: Հանուն Արցախի ազատագրության այն վեր է ածվել կանանց, մայրերի հասարակական-քաղաքական շարժման: Կապեր են հաստատվել Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Կիևի դեմոկրատական շարժումների, ամերիկյան հայ համայնքի, մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մի շարք կազմակերպությունների հետ: Հիմնադրամի նախագահը եղել է ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների պաշտպանության ինֆորմացիոն, կանանց իրավունքների պաշտպանության միջազգային կենտրոններում, հանդիպումներ է ունեցել նաև արտասահմանյան լրագրողների հետ, պատմել ճշմարտությունն Արցախի մասին, նրանց տրամադրել տեսաժապավեններ՝ Սումգայիթի, Բաքվի հայկական կոտորածների, ղարաբաղյան իրադարձությունների մասին:

Երախտագիտության զգացում արտահայտելով Արցախին սատար կանգնողների նկատմամբ, զրուցակիցս բոլորովին էլ չթաքցրեց իր զարմանքն ու զայրույթը Հայաստանում մեծ չափերի հասնող որոշ զազրելի երևույթների կապակցությամբ: Նախկին Խորհրդային Միության տարբեր քաղաքներում հայտնված մեր բիզնեսմեն կոչված սպեկուլյանտներն իրենց անչափելի ախորժակով, շահամոլությամբ ու նյութամոլությամբ ստվեր են գցում հայ ժողովրդի բարի անվան վրա: Ի՞նչ է ստացվում. մեր ժողովրդի որդիների մի մասը զոհվում է հանուն Արցախի ազատագրության, իսկ մի զգալի մասը փող է դիզում: Մեկը կռվում է, մյուսը՝ հարստանում: Չպետք է մոռանալ, որ այսօր վճռվում է ոչ միայն Լեռնային Ղարաբաղի լինել-չլինելու, այլև՝ Հայաստանի Հանրապետության ապագայի հարցը: Այսօր կռվել է պետք, կռվողներին սատարել է պետք: Հայրենիքը հայրենասեր որդիների արյամբ է գնահատվում-իմաստավորվում և ոչ թե մեր ազգային ցավին անտարբեր սպեկուլյանտների դիզած և անձնական հաճույքների համար քամուն տրվող փողերով:

— Լսել եմ, որ այստեղ՝ Հայաստանում նախատեսվում է անցկացնել գեղեցկության տոն,— ասում է Համիկ Մամիկոնովնան:— Ուրիշ մի ժամանակ դա կարելի էր միայն ու միայն ողջունել: Բայց այսօր, երբ մեր ժողովրդի արցախյան հատվածի արյունն է հոսում, երբ Ղարաբաղի աստվածային գեղեցկությունն է խաթարվում-պղծվում, ի՞նչ գեղեցկության տոնի մասին կարող է խոսք լինել: Հետաքրքիր է, իսկ միջոցառմանը մասնակցելու համար հրավիրվե՞լ են մարտնչող Արցախի մրահոն, լուսաթաթախ աղջիկները: Եթե այո, ապա մտածե՞լ են, որ նրանք չեն կարող գալ և մասնակցել գեղեցկության տոնին մի պարզ պատճառով. անհնար է մարտի դաշտում մենակ թողնել կռվող հայրերին, եղբայրներին, սիրածներին: Կռիվ է նաև ՀՀ-ի սահմանամերձ շրջանների գյուղերում: Ուրեմն՝ այնտեղից էլ գեղեցկուհիներ չեն գա: Գուցե մի քիչ սպասե՞նք:

Մեր զրույցի վերջում ահա թե ինչ ասաց ԼՂՀ-ի «Մայրություն» բարեգործական հիմնադրամի նախագահը.

— Որպես կին, որպես մայր, խոսքս ուղղում եմ մեր ժողովրդին հերոսներ պարգևած մայրերին. թշնամու առաջ չխոնարհվող մեր լեռները խոնարհվում են Արցախի համար նահատակված ձեր որդիների սխրանքի առջև:

Ռուբեն ԳՐԻԳՈՐՅԱՆ